ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հուլիսի 2023 թվականի №---Ա
ք. Երևան

«ԷԿՈՎԻԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԷԿՈՎԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի մայիսի 23-ի գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող՝ Վարդան Վահագնի Հովսեփյանին պատկանող 20 տոկոս և Սևակ Ռոբերտի Օխանյանին պատկանող 80 տոկոս բաժնեմասերի՝ «ԷԿՈՎԻԼ ՀՈԼԴԻՆԳ» փակ բաժնետիրական ընկերությանը օտարման գործարքի կնքմանը,

բ) Ընկերությունը 2023 թվականի մայիսի 31-ի և հունիսի 2-ի գրություններով դիմել է Հանձնաժողով՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող՝ Տիգրան Ռոբերտի Օխանյանին պատկանող 80 տոկոս բաժնեմասի՝ Սևակ Ռոբերտի Օխանյանին օտարման գործարքի կնքմանը, իսկ 2023 թվականի հուլիսի 13-ի գրությամբ ներկայացրել է 2022 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված՝ Տիգրան Ռոբերտի Օխանյանին պատկանող 80 տոկոս բաժնեմասի՝ Սևակ Ռոբերտի Օխանյանին նվիրատվության պայմանագրի պատճենը,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2023 թվականի հունիսի 15-ի №ԳԲ/34.1-Մ4-1/1988-2023 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ սույն որոշման նախաբանի «ա» և «բ» կետերում նշված գործարքների (այսուհետ՝ Գործարքներ) վերաբերյալ Կառավարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 10-ի №02/12.4/23622-2023 գրությամբ Հանձնաժողով են ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ու էկոնոմիկայի նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումները՝ Գործարքների մասով առարկություններ չունենալու վերաբերյալ,

դ) հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածով սահմանված՝ Գործարքների համաձայնեցման մերժման հիմքերը: Պարզվել է նաև, որ Տիգրան Ռոբերտի Օխանյանին պատկանող 80 տոկոս բաժնեմասի՝ Սևակ Ռոբերտի Օխանյանին օտարման գործարքը Ընկերության կողմից արդեն իսկ կնքվել է 2022 թվականի դեկտեմբերի 9-ին՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի խախտմամբ՝ առանց Հանձնաժողովի նախնական համաձայնության, ինչով պայմանավորված օրենքի ուժով այն առ ոչինչ է: Միաժամանակ, մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման ընդունումը Ընկերությունը վերացրել է նշված խախտումը՝ Հանձնաժողով ներկայացնելով համապատասխան հայտը և բաժնեմասի օտարման վերաբերյալ պայմանագիրը, և խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, դրանք ուղղակիորեն չեն հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, առկա չէ խախտման կատարման կրկնակիություն և Ընկերությունը նախկինում նման խախտում թույլ չի տվել, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ՝

1) Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող՝ Տիգրան Ռոբերտի Օխանյանին պատկանող 80 տոկոս բաժնեմասի՝ Սևակ Ռոբերտի Օխանյանին օտարման գործարքին,

2) Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող՝ Վարդան Վահագնի Հովսեփյանին պատկանող 20 տոկոս և Սևակ Ռոբերտի Օխանյանին պատկանող 80 տոկոս բաժնեմասերի՝ «ԷԿՈՎԻԼ ՀՈԼԴԻՆԳ» փակ բաժնետիրական ընկերությանը օտարման գործարքի կնքմանը:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը.

2) սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:

3. Ընդունել ի գիտություն, որ 2022 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող՝ Տիգրան Ռոբերտի Օխանյանին պատկանող 80 տոկոս բաժնեմասի՝ Սևակ Ռոբերտի Օխանյանին օտարման վերաբերյալ գործարքը կնքման պահից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առ ոչինչ է:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2023թ.